**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/21949-2026

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-1368-12.06.2026-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2026 թվականի հունիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 560 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան

Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող

Հեռ. 010515686

Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Պ-1368-12.06.2026-ՊԻ-011/0) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացված օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշումը հանգում է հետևյալին.

1. Սկզբունքորեն ընդունելի համարելով նախագծերով առաջարկվող լուծումները՝ հարկ է նկատել, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) ընտրված ժամկետային միջակայքը կարող է դիտարկվել ոչ բավարար՝ քաղաքացու՝ պետության հետ ունեցած իրական և կայուն կապի առկայությունը վկայելու համատեքստում: Այս հարցի կապակցությամբ հնարավորինս իրական պատկերացում ձևավորելու համար նպատակահարմար է քննարկման առարկա դարձնել առավել տևական ժամանակահատվածում այդ կապի հաստատուն լինելը հավաստելուն ուղղված լուծումների նախատեսումը: Մասնավորապես, քաղաքացու՝ պետության հետ ունեցած հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը գնահատելու համար կողմնորոշիչ կարող է լինել որոշակիորեն երկարատև ժամանակահատվածում այդ հարաբերությունների շարունակականությունը՝ որպես առավել արդարացի և ճշգրիտ ցուցիչ: Հակառակ պարագայում՝ կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ շարունակա-բար պետության հետ կայուն կապ ունեցող քաղաքացին, ընդամենը ընտրողների նախնա-կան ցուցակների ձևավորմանը նախորդող կարճ ժամանակահատվածում հանգամանք-ների բերումով՝ պարզապես պատահական համընկնման հետևանքով բացակայության հիմքով, հնարավորություն չունենա իրացնելու իր քաղաքական իրավունքը:

Այս տեսանկյունից, օրինագծերի ընդունմամբ հետապնդվող նպատակի համա-տեքստում հավասարակշռված լուծումների ներդրման անհրաժեշտությամբ պայմա-նավորված, առաջարկվում է դիտարկել ժամկետային միջակայքի ընդլայնումը՝ որպես ուղենիշ ունենալով պասիվ ընտրական իրավունքի իրացման համար նախատեսված 4 տարվա կտրվածքի կեսը, այն է՝ 2 տարին: Իսկ այդ միջակայքում փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվելու անհրաժեշտ ժամանակահատվածը կարելի է դիտարկել առնվազն 366 օրը:

Զուգահեռաբար, համակարգային միասնակությունն ապահովելու տեսանկյունից առաջարկվում է համանման նստակեցության ցենզ նախատեսել նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցության համար:

Վերոնշյալ լուծումների գործնական կիրառման արդյունավետության համատեքստում անհրաժեշտ է նախագծերի շրջանակներում նաև որոշարկել ռեզիդեն-տության համար նախատեսված ժամկետի ստուգման մեխանիզմը, որը պատշաճորեն կապահովի քաղաքացու՝ վերոնշյալ ռեզիդենտության պայմանին բավարարելու փաստի հավաստումը:

Այս տեսանկյունից, որպես հնարավոր լուծումներ, կարող են դիտարկվել, օրինակ, սահմանահատումների իրականացումը միայն ՀՀ կողմից տրված անձը հաստատող փաստաթղթերով կամ փաստացի ռեզիդենտության որոշարկումը սահմանին՝ անկախ անձը հաստատող փաստաթղթից կամ համանման այլ կարգավորումներ:

Միաժամանակ, հարկ է նշել, որ նախագծի 1-ին հոդվածով գործող օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող բացառությունը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ բացակայությունը պայմանավորված կլինի Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող անձանց ընտանիքի անդամ լինելու հանգամանքից ելնելով՝ արտերկրում բնակվելու իրողությամբ, որպիսի մոտեցումը համադրելի չէ նախագծերի ընդունմամբ հետապնդվող նպատակի հետ: Ուստի, առաջարկում ենք նշված հիմքը նախատեսել համապատասխան բացառությունների շարքում:

Բացի այդ, գործնական հարթությունում կիրառելիության խնդիրները բացառելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հարկ է նախատեսել իրավական հնարավորություն առ այն, որ՝

- երաշխավորվի ընտրողների ցուցակների ձևավորումը Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի և Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի՝ հատուկ ծրագրային ապահովման միջոցով փոխգործելիության արդյունքում նախագծով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջին բավարարող անձանց տվյալների հիման վրա,
- ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու համար դիմում ներկայացնելու հնարավորություն նախատեսող հիմքերը համալրվեն նաև սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջին չբավարարելու հիմքով համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկված չլինելու հանգամանքով:

Միաժամանակ, առաջարկվող վերանայումների ընդունման պարագայում, հարկ կլինի համարժեքորեն վերանայել նախագծի վերնագիրն ու հոդվածների համարակալումը:

Բացի այդ, նախագծի ուժի մեջ մտնելու համար ողջամիտ ժամկետ նախատեսելու նպատակով առաջարկվում է դիտարկել հրապարակմանը հաջորդող մեկամսյա ժամկետի սահմանումը:

2. Սույն առաջարկության 1-ին կետում Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու պահանջի, դիվանագիտական ծառայություն անցնող անձանց ընտանիքի անդամների և նախագծի ուժի մեջ մտնելու մասով նշված համապատասխան առաջարկությունները վերաբերելի են նաև «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծին:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է նախագծերի հետագա ընթացքավորումն իրականացնել վերոնշյալ փոփոխություններով հանդերձ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 560 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-1368-12.06.2026-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1368-12.06.2026-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում «լրացած» բառից հետո լրացնել «, քվեարկության օրվան նախորդող 48-րդ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ 28-րդ օրվա դրությամբ համապատասխանաբար դրան նախորդող 365 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 183 եւ ավելի օր գտնվող» բառերը, իսկ «քաղաքացիները» բառից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայությունը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության մեջ գտնվող անձի ծառայողական նպատակներով արտերկրում գտնվելու կամ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հանգամանքներով» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1368[1]-12.06.2026-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրաքվեի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-155-Ն սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն հանրաքվեի օրը 18 տարին լրացած, հանրաքվեի օրվան նախորդող 48-րդ, իսկ նոր քվեարկության դեպքում՝ 28-րդ օրվա դրությամբ համապատասխանաբար դրան նախորդող 365 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 183 եւ ավելի օր գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայությունը պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայության մեջ գտնվող անձի ծառայողական նպատակներով արտերկրում գտնվելու կամ արտերկրում բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության հանգամանքներով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է ժողովրդաիշխանության իրացման 2 հիմնական ձեւերին՝ ընտրություններին եւ հանրաքվեներին վերաբերելի ընդհանուր դրույթներ՝ մնացած մանրամասները թողնելով համապատասխան օրենքների կարգավորմանը: Սակայն ներկայիս կարգավորումներով ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին եւ հանրաքվեներին մասնակցելու իրավունքի իրացման համար բացակայում է քաղաքացի-պետություն մշտական կապն արտացոլող որեւէ լուծում (ի տարբերություն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների եւ տեղական հանրաքվեների):

Պետության հետ քաղաքացու բավարար կապի (պարբերական կապի) տեսության հիմքում, ըստ էության, ընկած է այն ողջամիտ տրամաբանությունը, որ քաղաքացիությունը չի կարող լինել միայն ֆորմալ իրավական կապ, այլ՝ պետք է արտացոլի իրական սոցիալական, տնտեսական եւ կենսագործունեության կապ պետության հետ: Քաղաքացիությունն արդյունավետ է միայն դեպքում, երբ առկա է իրական կապ անձի եւ պետության միջեւ: Ընդ որում, քաղաքացին ստանում է տվյալ պետության կողմից երաշխավորված իրավունքների ամենամեծ ծավալը եւ իրավական պաշտպանության ամենաբարձր աստիճանը, որը տվյալ պետության հետ կայուն կապի բացակայության պայմաններում դառնում է կապի ֆորմալ եւ միակողմանի դրսեւորում:

Այս իմաստով, քաղաքացիությունը անհրաժեշտ, բայց ոչ ամենեւին բացառիկ եւ ոչ միակ պայմանն է՝ ժողովրդաիշխանության իրացման հիմնական ձեւերին՝ ընտրություններին եւ հանրաքվեներին մասնակցելու համար: Քաղաքացիությունը թեեւ քաղաքացի-պետություն կապի հիմնական իրավական դրսեւորումն է, սակայն ինքնին քաղաքացիության առկայությունը չի վկայում պետության հետ բավարար կապի առկայության մասին: Ըստ այդմ, քաղաքացիությունը կարող է կորցնել իր «որոշիչ դերակատարումը» այդ հարցում, եթե անձը տեւական ժամանակ կտրված է պետության քաղաքական, սոցիալական, տնտեսական կյանքից: Այս համատեքստում, ընտրությունները պետք է արտացոլեն այն անձանց կամքը, որոնք իրապես գտնվում են այդ պետության որոշումների ազդեցության տիրույթում: Այս իմաստով, թեեւ քաղաքացիությունը ելակետային է ժողովրդաիշխանության իրացման համար, սակայն անհրաժեշտ է ապահովել նաեւ մասնակցային ժողովրդավարության բովանդակային կողմը, այսինքն՝ ընտրողի բավարար կապը պետության հետ:

Ավելին, քաղաքացիությունը չի դրսեւորվում միայն որպես իրավական պատկանելություն: Մասնավորապես, քաղաքացիությունը ոչ թե սոսկ իրավական կապ է պետության հետ, այլ նաեւ՝ պատկանելություն եւ մասնակցություն այդ պետության քաղաքական կյանքին եւ իր շահերը շոշափող համապատասխան որոշումների կայացմանը: Հետեւապես, այս տեսանկյունից եւս, ժողովրդաիշխանության իրացման առանցքային եղանակներին մասնակցությունն օբյեկտիվորեն առավել արդարացված կարող է լինել այն քաղաքացու համար, ում համար տվյալ պետությունը հանդես է գալիս որպես հիմնական շահերի կենտրոն՝ դրան համապատասխան հետեւանքներով հանդերձ. քաղաքացին ոչ միայն մասնակցում է հանրային իշխանության ձեւավորմանը, այլեւ՝ ստանձնում է այդ իշխանության գործունեության հետեւանքները կրելու պատրաստակամություն՝ ներգրավվելով այդ իշխանության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությանը:

Այս մոտեցումը համահունչ է նաեւ Սահմանադրական դատարանի՝ քաղաքացիության ինստիտուտի վերաբերյալ արտահայտած դիրքորոշմանը: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը 2011 թվականի մարտի 15-ի ՍԴՈ-945 որոշմամբ քաղաքացիությունը բնութագրել է որպես անձի եւ պետության միջեւ առկա իրավական կայուն կապ, որն արտահայտվում է փոխադարձ իրավունքների, պարտականությունների եւ պատասխանատվության համակցության մեջ:

ՍԴՈ-945 որոշման մեջ արտահայտված դիրքորոշումից հետեւում է, որ քաղաքացիությունը միայն ձեւական իրավական կարգավիճակ կամ անձնագիր ունենալը չէ: Քաղաքացիության հիմքում դրված է անձի եւ

պետության միջեւ կայուն, շարունակական եւ փոխադարձ բնույթի կապը, որն ունի ոչ միայն իրավունքների, այլեւ՝ պարտականությունների եւ պատասխանատվության բովանդակություն: Հետեւաբար, ընտրական եւ հանրաքվեին մասնակցելու իրավունքները, լինելով քաղաքացիության հետ անմիջականորեն կապված քաղաքական իրավունքներ եւ պետական իշխանության ձեւավորմանը ու հանրային կարեւորագույն նշանակության հարցերի լուծմանը մասնակցելու հիմնական միջոցներ, չեն կարող կտրվել քաղաքացիության այդ բովանդակային ընկալումից:

Եթե քաղաքացին մասնակցում է պետական իշխանության ձեւավորմանը եւ հանրային կարեւագույն հարցերով որոշումների կայացմանը, ապա նա ոչ միայն իրացնում է իր քաղաքական իրավունքները, այլեւ՝ ազդում է այն իշխանության ձեւավորման եւ կարեւորագույն այն որոշումների ընդունման վրա, որոնք հետագայում վճռորոշ ազդեցություն են ունենալու պետության ներքին եւ արտաքին քաղաքականության, անվտանգության, հարկային, սոցիալական, տնտեսական, կրթական, պաշտպանության եւ այլ կենսական ոլորտների վրա: Այդ որոշումների անմիջական եւ առօրյա հետեւանքները առաջին հերթին կրում են Հայաստանի Հանրապետությունում բնակվող եւ նրա հանրային կյանքում ներգրավված քաղաքացիները:

Այս համատեքստում, ՍԴՈ-945 որոշման մեջ արտահայտված «կայուն իրավական կապի» գաղափարը կարող է ծառայել որպես կարեւոր սահմանադրաիրավական հիմք այն դիրքորոշման համար, որ ընտրական իրավունքի եւ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրացման կարգը սահմանելիս օրենսդիրը կարող է հաշվի առնել քաղաքացիության ոչ միայն ձեւական, այլեւ՝ բովանդակային կողմը: Հետեւաբար, օրենսդիրը կարող է նախատեսել այնպիսի կարգավորումներ, որոնք ընտրական իրավունքի եւ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրացումը կապում են Հայաստանի Հանրապետության հետ իրական, կայուն եւ փաստացի կապի առկայության հետ:

Վերոգրյալի համատեքստում, հարկ է ընդգծել, որ այս տրամաբանությունը ներկայումս իր իրավական ձեւակերպումն է ստացել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների եւ տեղական հանրաքվեների մասով: Հետեւաբար, այս տեսանկյունից առաջանում է տրամաբանական խզում. մասնավորապես, տեղական, այլ կերպ ասած՝ առավել նվազ ազդեցություն ունեցող իշխանության մարմինների ձեւավորման կամ տեղական նշանակության հարցերի լուծման պարագայում նախապատվությունը տրված է համայնքի կյանքին ներգրավվածությանը, մինչդեռ համապետական նշանակության ներկայացուցչական մարմնի ձեւավորման եւ համապետական հանրաքվեներին մասնակցության պարագայում՝ ոչ, որպիսի մոտեցումը խաթարում է համակարգային միասնականությունը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծերով առաջարկվում է համապետական ընտրություններին եւ հանրաքվեներին մասնակցելու պարագայում կարեւորել քաղաքացիության ուժով պետության հետ անձի կապի ոչ միայն ֆորմալ, այլ նաեւ՝ բովանդակային կողմը: Ըստ այդմ, առաջարկվում է ընտրություններին եւ հանրաքվեներին մասնակցելու համար սահմանել նաեւ քվեարկության կամ հանրաքվեի օրվան նախորդող 48-րդ օրվա դրությամբ, իսկ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների կամ նոր քվեարկության դեպքում՝ 28-րդ օրվա դրությամբ համապատասխանաբար դրան նախորդող 365 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում փաստացի 183 եւ ավելի օր գտնվելու պահանջ՝ ապահովելով տեղական ինքնակառավարման մարմինների եւ տեղական հանրաքվեների համար ներկայումս սահմանված կարգավորումների հետ համակարգային միասնականությունը:

3. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը եւ պետական բյուջեի եկամուտներում եւ ծախսերում սպասվելիք փոփոխությունները.

Նախագծերի ընդունմամբ պետական բյուջեի եկամուտներում եւ ծախսերում ավելացումներ կամ նվազեցումներ չեն առաջանում:

4. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք եւ նրանց դիրքորոշումը.

Նախագծերը մշակվել են ՀՀ ներքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ:

5. Նախագծերի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

Նախագծերի ընդունմամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանա:

6. Ակնկալվող արդյունքը.

Նախագծերի ընդունման արդյունքում կապահովվի ժողովրդաիշխանության իրացման համակարգային միասնականությունը՝ երաշխավորելով ժողովրդավարական կառավարմանը այն քաղաքացիների մասնակցությունը, որոնց կապը պետության հետ ունի իրական բնույթ եւ բովանդակություն: